ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԴԻՆԱԼԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Լիլիթ Պողոսյան

Ընդհանրական եկեղեցու ժամանակակից պատմության նշանավոր դեմքերից է Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը (իտալերեն՝ Agagianian Gregorio Pietro), ում կյանքի էջերը ուսումնասիրելը հոգի է մաքրագործում: Կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ մեծ ավանդ ունեցող հայորդին ապրեց և գործեց քրիստոնյային վայել առաքինությամբ և զսպված՝ լինելով մշտական ուշադրության կենտրոնում թե՛ հայության, թե՛ օտարազգերի շրջանում:

Ժամանակի պարբերական մամուլը և գիտական ամսագրերը գեղեցիկ գլխագրերով ավետեցին հայազգի հոգևորականի կարդինալական տվչություն ստանալը: Այսօր նպատակային ենք համարում կրկին անգամ անդրադառնալ շուրջ յոթանասուն տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին, ինչը նաև պատճառ հանդիսացավ հետագայում կարդինալ Աղաջանյանի այդքան մեծ ճանաչում ու հեղինակություն ձեռք բերելուն:

1946 թ. փետրվարի 18-ին Պիոս ԺԲ Պապի կողմից Գրիգոր Պետրոս Աղաջանյանին շնորհվում է ծիրանագույն գլխարկ և նա դառնում է տիտղոսակիր կարդինալ (S. Bartholomaei in Insula տիտղոսով):

1945 թ. դեկտեմբերի 23-ին Գրիգոր-Պետրոս Աղաջանյանը Վատիկանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկից ստանում է հետևյալ գրությունը, որով նա տեղեկացվում է Նորին Սրբության Քարտուղարության կողմից այն մասին, որ L'Osservatore Romano թերթը կծանուցի իրեն փետրվարի 18-ին Պապի կողմից կարդինալական տիտղոս ստանալու մասին[1]:

Ահա հրովարտակ-վճիռը, որով Գրիգոր-Պետրոս Աղաջանյանին շնորհվել է կարդինալական տիտղոսը (սկզբում լատիներեն բնագիրը, ապա հայերեն թարգմանությունը):

---

[1] Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 64:

Romae
In Palatio Apostolico Vaticano
Feria IIa die XVIII a mensis Februarii
MCMXLVI
SS.mus Dominus Noster
Creavit et publicavit S. R. E. Presbyterum Cardinalem
Gregorium-Petrum XV. Agagianian
Patriarcham Ciliciae Armenorum

Ipsumque Reverendissimorum eiusdem S. R. E. Cardinalium Coetui et Collegio favorabiliter aggregavit, cum omnibus et singulis honoribus, favoribus, oneribus, facultatibus, praeminentiis, immunitatibus, praerogativis, privilegiis et indultis solitis et consuetis, necnon cum clausulis necessariis et apportunis.

Pro S. R. E. Cancellario
† J. Card. GRANITO PIGNATELLI di BELMONTE
Decanus Sacri Collegii
(Timbro)
Cancelleria Apostolica

Ի Հռոմ
Ի Վատիկանեան Առաքելական Պալատի
Յերկուշաբթի ի 18-ում աւուրամսեան Փետրուարի
1946
ՍՐԲԱԶԱՆ ՏԷՐԸ ՄԷՐ
ստեղծեց և հրատարակեաց ի Քարտինալ Քահանայ Ս. Հ. Եկեղեցւոյ
ԶԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՃԱՆԵԱՆ
զՊատրիարքն Հայոց Տանն Կիլիկիոյ
և զնա սիրով միաւորեալ դասեաց ի կարգս արգոյապատիւ Ծիրանաւորաց Ս.Հ.Ե. ամենայն և իւրաքանչիւր պատուովք, շնորհօք, պարտուք իշխանութեամբք, գերադասութեամբք, սովորական և ընկալեալ արտօնութեամբք, որպէս և հարկաւոր և պատշաճաւոր պայմանովք:
Փոխանակ Դիւանադպրի Ս.Հ.Ե.
† Գ. Կարդ. ԿՐԱՆԻԴՈ ՓԻՆԻԱԴԵԼԼԻ տի ՊԵԼՄՈՆԴԷ
Կարգերէց Ծիրանաւորաց Դասուն
(Կնիք)

Առաքելական Դիւանատուն[1]

Այս առիթով Գիրգոր Պետրոս ԺԵ Աղաջանյանն իր 1946 թ. Բեյրութում հրապարակած Հովվական թղթում նշում է. «Մինչ կը պատրաստուէինք Ս. Ծննդեան մօտերը վերադառնալու Պէյրութ, ինչպէս ծրագրած էինք նախապէս, ահա՛ սակայն Դեկտ. 23-ին մեր քահանայական ձեռնադրութեան տարեդարձին- Ս. Աթոռի պետական Քարտուղարութեան դիւանէն շնորհագիր մը կը հասնէր մեզի որով լուր կը տրուէր թէ յառաջիկայ Փետրուար 18ին Ս. Պապը Կարդինալաց խորհրդաժողով պիտի գումարէր, 32 նոր Կարդինալներ պիտի անուանէր, որոնց շարքին և Կիլիկիոյ Տան Հայ-Կաթողիկէ Պատրիարքը: Շնորհագիրը ստանալէս երեք քառորդ ժամ ետքը ռատիոկայանները կը տարածէին այս աւետիսը ի լուր տիեզերքի՝ աննկարագրելի ցնծութիւն պատճառելով Կաթողիկէ Աշխարհի և խոր շահագրգռութիւն յարուցանելով ամէն նաեւ ոչ Կաթողիկէ խաւերու մէջ:

Առաջին անգամն էր որ ներկայ Սրբազան Պապը Կարդինալներու անուանում կը կատարէր. անուանում մը սակայն աննախընթաց Ս. Աթոռի տարեգրութեանց մէջ թէ՛ թեկնածուներու թուոյն և թէ՛ անոնց ծագումի և ազգութեան տեսակէտով: 32 կարդինալներէն չորսը միայն իտալացի էին և 28՝ ուրիշ 18 զանազան ազգերէ՝ հետեւեալ դասաւորումով. 1հայ, 4 ամերիկացի, 4 սպանիացի, 3 գաղղիացի, 1 հոլլանտացի, 1 պրազիլիացի, 1 աւստրալիացի, 1 չիլիցի, 1 բորթուգալցի (Ափրիկէի գաղթավայրերէն), 1 ավանացի, 1 բերուցի, 3 գերմանացի, 1 անգղիացի, 1 հունգարացի, 1 արժանդինցի, 1 չինացի, 1 լեհացի, 1 գանատացի»[2]:

Այս հովվական թղթում նա մի շատ կարևոր տեղեկություն է նաև հայտնում այն մասին, որ 1946 թ. մարտի 12-ին Հռոմի պապի հրամանով իր գահակալության յոթերորդ տարվա կապակցությամբ Վատիկանում՝ Սիքստինյան մատուռում, հրահանգում է մատուցել պատարագ հայկական ծեսով, շարականներով և ավանդությամբ: Սա մի չտեսնված արարողություն պիտի լիներ, որի մասին դեռ երկար պիտի խոսեին թե՛ օտար, թե՛ հայալեզու մամուլը:

Կազմակերպչական աշխատանքները իրականացրեցին Հռոմի Լևոնյան վարժարանի և Վենետիկի Մխիթարյանների վերակացուների միջո-

---

[1] Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 81:

[2] Աղաճանեան Գրիգոր Պետրոս ԺԵ, Թուղթ Հովուական, Պեյրութ, 1946, էջ 4:

ցով: Առաջին հերթին կազմվեց անհրաժեշտ երգչախումբը (50 երգիչ)՝ Լևոնյան վարժարանի և Մխիթարյան միաբանության ուսանողներից, մի քանի հայ ուխտավոր երիտասարդներից, Սիքստինյան մատուռի առաջնակարգ երգիչներից և 20-25 հոգի էլ Servi di Maria եկեղեցական հաստատության աշակերտներից: Կարճ ժամանակում նրանք պատրաստվեցին Եկմալյան քառաձայն պատարագի երգեցողությանը:

Սբ. Ղազարից Հռոմ բերվեց հայկական թանկագին և ճոխ սպասքները, ձեռագործ ոսկեթել հագուստները[1]:

Այս մասին կարդինալը հիշում է. «Նորին Սրբութիւնը կը հրամայէր որ իր Գահակալութեան եօթներորդ տարեդարձին, Մարտի 12-ին, հայրապետական Ս. Պատարագը մենք մատուսանէինք մեր հայրենի ծէսով, ի օգոստափառ ներկայութեան, շրջապատուած իշխանական, դեսպանական, բարձրաստիճան եկեղեցականներու, կարդինալներու դասերէ: Սրբազան Պապը Ինքը երկիցս հայ լեզուով արտասանեց Ս. Աւետարաններու ընթերցումէն առաջ «խաղաղություն ամենեցուն» մաղթանքը: Այդ նշանակալից օրը հայ ծէսը փառաւորուեցաւ յաչս Աշխարհի և Եկեղեցւոյ ինչպէս թերեւս բնաւ եղած չէր իր բազմադարեան յոլովոյթի ընթացքին: Վատիկանի ձայնասփիւռը օրեր շարունակ գովքը հիւսեց Հայ ժողովուրդին և զանազան լեզուներով հաղորդեց մանրամասնութիւններ հայ պատարագի մասին և երգերէն ալ ինչ ինչ կտորներ»: Այդ պատարագին մասնակից են եղել Հռոմի, Իտալիայի, Ֆրանսիայի և Բելգիայի հայ գաղութներից ներկայացուցիչներ, ինչպես նաև Հռոմեական աթոռի բարձրաստիճան հոգևորականներ, դեսպաններ և պետական գործիչներ: Պատարագի ժամանակ Պիոս ԺԲ պապը ընթերցեց համառոտ, բայց բովանդակալից մի ճառ, որը ամբողջությամբ հայերեն թարգմանությամբ մեզ է հաղորդում կարդինալն իր ուղերձում: Ստորև կներկայացնենք այդ ճառն, ինչը մեծ խանդավառություն է առաջացրել հայ կաթողիկե հավատացյալների շրջանում այդ ժամանակ:

«Սիրելի որդեակներ, երբ բարի գալուստի ողջոյնը կուտանք Ձեզի մեր տան մէջ, ինչքա՛ն տրոփյուն յուզում է որ կ՛արթննայ մեր մէջ ձեր ընծայած տեսարանին առջեւ այս յիշատակելի պատեհութեան: Մեր ընտրած Կարդինալներու առաջինը կ'ըլլայ ձեր ժողովուրդի զաւակներէն մէկը, որ շրջապատուած է յարգելի Եպիսկոպոս եղբայրներէ, եւ այդ միեւ-

[1] Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 105:

նոյն ժողովուրդը ներկայացուած է կրօնաւորներէ, մայրապետներէ, կղերիկոսներէ եւ քահանաներէ, որոնց կարգին ուրախ ենք յատկապէս նշմարելով սիրելի եւ արդիւնաշատ Մխիթարեան միաբանները. ներկայացուած է նոյն ժողովուրդը նաեւ աշխարհականներէ, հայրենակիցներէ որոնք եկած են գրեթէ ամեն այն վայրերէ, ուր Հայ ժողովուրդը գտած է պատսպարան, ամենքդ ալ ի վերջոյ համախմուած էք Մեր շուրջ, մատուցանելու համար Մեզ Ձեր յարգանքի եւ որդիական սիրոյ հաւաստիքը:

Կարդինալ ընելով բարձրամեծար Պատրիարքը Կիլիկիոյ Հայոց, Մենք դիտում ունեցանք անշուշտ վարձատրելու գերազանց արժանիքները յոյժ արժանաւոր եւ ամենահաւատարիմ աւագ եկեղեցականի մը, բայց կոչելով զայն անդամակցելու Հռոմէական Եկեղեցւոյ Ծերակոյտին եւ Հայրապետական պատարագ մատուցանելու Սիքստեան մատռուն մէջ իր մեծասքանչ ծեսին ամբողջ շքեղութեամբը, ուզեցինք միեւնոյն ատեն շեշտել, ու այպէս ըսենք, պսակել հանդիսաւոր ցոյցով մը շարքը փաստերու հոգածութեան ու սիրոյ, որ քրիստոնէութեան ամենահին օրերէն՝ դարերու ընթացքին մինչեւ այսօր չէ դադարած երբեք Պետրոսի Գահը տածելէ Հայաստանի եւ իր ժողովրդեան հանդէպ: Կրնանք արդարեւ մենք իրաւամբ ըսել թե այս գերազնիւ Ազգը, իր ձախողանքներուն եւ տառապանքներուն մէջ ունեցած է միշտ պաշտպան եւ փաստաբան Հռոմեական Քահանայապետը:

Այդ ձախողանքները եւ այդ տառապանքները պակսած չեն ձեր պատմութան մէջ: Սա՝ եթէ հարուստ է մեծ ու փառահեղ գործերով եւ դիպուածներով թե՛ խաղաղութեան, թե՛ պատերազմի օրերուն, աշխարհիկ մշակոյթի ու հաւատքի ծառայութեան մէջ. կ'ընծայէ նոյնպէս ո՛չ նուազ յաճախութիւն մը ողբերգական դիպուածներու: Այսուհանդերձ այդ ամենը յատկանշուած է ցայտուն մէկ հանգամանքով մը եւ այն եղած է արիասիրտ հոգեկան կորովը քրիստոնէական հաւատքի դաւանութեան ու պաշտպանութեանը մէջ: Ասոր համար մեծապէս ցնծառիթ է Մեզ ունենալ այս պատեհութիւնը շնորհաւորելու զՁեզ այդ մասին:

Ձեր անցեալ հաւատարմութեան այս հաճոյական վերյիշումով կ'ուղղենք Ձեզի ներկայիս եւ ապագայի համար ջերմ յանձնարարութիւն մը հոգեկան խռովքի եւ շփոթութեան օրերու մէջ: Ամո՛ւր կեցէք ձեր հաւատքին վրայ, ձեր լիակատար, ամբողջական, անայլայլելի դաւանանքին վրայ ամէն յայտնեալ ճշմարտութիւններու, զորս կը սորվեցնէ Եկեղեցին, մնացէ՛ք հաւատարիմ շնորհքի ամէն խորհուրդներուն, զորս նա կը մա-

տակարարէ: Մի՛ տարուիք, մի՛ խաբուիք հոսանքներէ, որոնք ի վերջոյ մակերեսային բանապաշտութեան կը յանգին, սոսկ մարդկայնական եւ երկրաւոր բարոյականի մը կամ ի վերջոյ անաստուածութեան:

Սուրբ արարողութեան մէջ, զոր ձեզ հետ կատարեցինք, սարկաւագը կը քարոզէ այս գեղեցիկ յորդորակը. «Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր. Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցոյ՛ եւ ողորմեա՛» ու դպրաց դասը կը պատասխանէ. «Քրիստոս... բարեխօսութեամբ երկնային քո զօրացդ միշտ անշարժ պահեա, զԱթոռն Հայկազնեայց»- այս է Մեր սրտին մաղթանքը Ձեզի աստուածապարգեւ խաղաղութիւնը, սերը եւ շնորհքը Փրկչին, կուտանք Ձեզի ներկաներուդ եւ ամբողջ սիրելի Հայ ժողովրդեան հոգեպարար զիջումով Մեր Առաքելական Օրհնութիւնը»[1]:

Հայկական պատարագը կատարվեց անթերի և հաջող, որի վերաբերյալ տեղին է հիշել այս առիթով կարդինալ Փիցցարտոյի խոստովանությունը այն մասին, որ հայկական պատարագի ամբողջ ընթացքում ինքը հուզմունքից արտասվել է՝ ազդվելով այնքան խորիմաստ աղոթքներից, երգերից[2]: Մեկ ուրիշ արքեպ. Մելլա դի Ելիան ասել է, որ չի կարող իր հիացմունքը զսպել այնպիսի բարձր և իմաստալից աղոթքների, օծուն զգացմունքների, խոր հավատքի և բարեպաշտության առջև[3]: Սբ. Պողոս վանքի աբբահայր Վանուչչի եպիսկոպոսն Մխիթարյաններից մեկին ասել է. «E' stato un vero trionfo!» (Կատարյալ հաղթանակ էր)[4]: Ինքն Հռոմի պապը Վսեմ. Աղաջանյան Ծիրանավոր Պատրիարքին պատարագի ավարտից հետո հանդիպման ժամանակ իր շնորհակալական խոսքն ուղղելուց հետո հավելել է իր գոհունակությունը հատկապես շարականների համար և ավելացրել, որ դրանք արժանի են հնչելու ոչ միայն Սիքստինյան այլև մեծագույն այլ տաճարներում[5]:

Վատիկանի ռադիոն ձայնագրում է պատարագը և կարևորագույն հատվածները հեռարձակում ողջ աշխարհում: Ամեն հատվածից առաջ

---

[1] Աղաճանեան Գրիգոր Պետրոս ԺԵ, Թուղթ Հովուական, էջ 5-6:

[2] Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 110:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

բացատրվում էր հայերեն-իտալերեն-ֆրանսերեն լեզուներով աղոթքի կամ շարականի իմաստը, որպեսզի ունկնդիրները կարողանային հետևել ու հասկանալ ծեսը: Եվ միայն վերջաբանը հայերեն հեռարձակվեց. «Պատարագը վերջացած է. Ս. Քահանայապետը բոլոր ներկաներուն եւ բովանդակ աշխարհի կու տա իր օրհնութիւնը եւ ներողութիւն լիակատար՝ սահմանուած պայմաններով: Թափօրը կը կազմուի. յամրաքայլ կը վերադառնան աւանդատուն «Հրաշափառ» շարականն երգելով ի պատիւ նոյն ինքն Գերերջանիկ Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ, որուն կը մաղթենք յանուն ամբողջ Հայութեան՝ երջանիկ եւ երկար տարիներ՝ ի փառս Աստծոյ, յօգուտ Ս. Եկեղեցւոյ եւ ի պարծանս Հայ ազգին: Երախտագիտութիւն եւ ամենախորին շնորհակալութիւն յանուն ամբողջ Հայութեան առ Ս. Քահանայապետ Պիոս ԺԲ, որ այսքան գերագույն մխիթարութիւն եւ պատիւ շնորհեց Հայ ազգին. թող Աստուած զինքը պահէ երկար եւ երջանիկ տարիներ՝ որպէս հայր եւ Խաղաղարար աշխարհի»[1]:

Սիքստինյան մատուռում մատուցված սբ. Պատարագի հաջորդ օրը՝ մարտի 13-ին Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը մի խումբ հայորդիների հետ (Արհ. Գերպ. Ս. Տեր-Աբրահամյան, Արհ. Գերպ. Քէտիճյան, Գերպ. Մխիթարյան Աբբահայր Սրապիոն Վ. Ուլուհոճյան, Մխիթարյան բազմաթիվ հայրեր, Աստվածաբանության և փիլիսոփայության ուսանողներ, Լևոնյան Վարժարանի աշակերտությունը, քահանաներ, Անարատ Հղության Հայ կույսեր, ընտանիքներ, անհատներ) հյուրընկալվել էր Պապին: Այս հանդիպման մանրամասները, Պապի ելույթն իտալերեն բնագրով և հայերեն թարգմանությամբ հրապարակվել են Բազմավեպում[2]:

Հռոմի հոգևորականությունը և ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեցին երեսուն երկու կարդինալների ընտրությունը: Անմիջապես սկսեցին տարբեր միջոցառումներ և ընդունելություններ կազմակերպել նրանց պատվին: Բացի այս ընդհանուր միջոցառումներից կազմակերպվեցին նաև մասնավորները՝ ի պատիվ հայ կարդինալի, ում հանդեպ հատուկ համակրանք և գնահատանք էին տածում Հռոմի բարձրագույն և ժողովրդական շրջանակներում:

---

[1] **Հ. Եղիա Փէչիկեան**, Հայկական պատարագը Վատիկանի ձայնասփիւռէն, Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 115:

[2] Մանրամասն տե՛ս Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 116-123:

Ընդհանրական միջոցառումների շարքում էին 1946 թ. փետրվարի 23-ին Գրիգորյան Համալսարանում տեղի ունեցած ընդունելությունը, որտեղ յուրաքանչյուր կարդինալի մայր լեզվով ողջույնի և մաղթանքի խոսքեր էին հղում: Հայ ծիրանավոր Պատրիարքին մաղթանք հղեց Տ. Գևորգ Լայըգյանը՝ Լևոնյան Քահ. Վարժարանից նորընծա քահանան:

Երկրորդ միջոցառումը տեղի ունեցավ Ուրբանյան վարժարանում, որտեղ ուսանել է հայ կարդինալը: Այս ընդունելությունը կազմակերպվել էր Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանի, Նորմաննուս Ճիլրոյի (Սիդնեյի արքեպիսկոպոս) և Թոմաս Թինի (չինացի) կարդինալների պատվին:

Երրորդ հանդիպումը ևս ընդհանրական բնույթ ուներ, որ տեղի ունեցավ Լաթերանյան Կաճառում Տրիդենտի Ժողովի չորրորդ հարյուրամյակի առիթով մարտի 2-ին: Այս միջոցառումը պաշտոնապես փակեց կարդինալ Աղաջանյանը, ում տրված էր բոլոր ծիրանավորների անունից փակման խոսք հնչեցնելը:

Մեծ ու շքեղ ընդունելություն կազմակեպվեց նաև Թագավորական պալատում բոլոր կարդինալների համար: Այս միջոցառմանը ներկա էին նաև շատ պետական այրեր:

Բացի վերոհիշյալ ընդունելություններից, տեղի ունեցան հաջորդաբար ուրիշ երեքը, որոնք նվիրված էին առանձնահատուկ կերպով ի պատիվ Վսեմ. Աղաջանյան կարդինալին: Դրանք են մարտի 13-ին Լևոնյան վարժարանում, մարտի 14-ին Արևելագիտության հաստատությունում և մարտի 15-ին Մխիթարյանների մոտ:

Նույն թվականին նա նշանակվեց Հռոմի Ս. Բարդուղիմեոս եկեղեցում կարդինալ-դեկան: Հին ավանդույթ է, երբ պապը կարդինալական տիտղոս է տալիս հոգևորականին լինի իտալացի կամ այլազգ, նա կարդինալական մատանու հետ նաև շնորհում է նրան Հռոմի հնագույն եկեղեցիներից մեկի տիտղոսը: Այս սովորույթը գործում է անկախ այն հանգամանքից, որ այդ կարդինալը կարող է հանդիսանալ որևիցէ թեմի կամ ազգի պատրիարք, առաջնորդ: Այսպես էր Գրիգոր-Պետրոս Աղաջանյանի պարագայում: Նրա գահը ամպիովանի էր կրում Հռոմի Տիբեր գետի ափի մոտ գտնվող «Ս. Բարդուղիմեոս կղզուց»[1] անունով հայտնի եկեղեցում: Ըստ ավանդույթի եկեղեցու դռան վերևի մասում ամրացվում է կարդինալի զինանշանը և նրա կողքին պապական զինանշանը: Ավագ

[1] Մանրամասն տե՛ս Բազմավէպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 98:

խորանի ձախ կողմում դրվում է կարդինալի դիմանկարը, իսկ աջ կողմում՝ պապինը: Վերոհիշյալ եկեղեցին միջնադարում կրում էր Ս. Բարդուղիմեոս Հովհաննես Կայետանոյի տաննից անունը, քանի որ գտնվում է Կայետանոների դղյակի մոտ: Եկեղեցին թվագրվում է 10-րդ դար և նվիրված է եղել Թրակիայի սբ. Ադալբերտո եպիսկոպոսին, ում մասունքները սբ. Պաուլինիոյի, սբ. Բարդուղիմեոսի, սբ. Էզուպերանցիոյի և սբ. Մարչելո վկաների մասունքների հետ գերմանական Օտտոն երիտասարդ կայսեր ձեռքով զետեղվել են այս եկեղեցում: Վերոհիշյալ սրբերի մասունքներից հատվածներ այժմ պահպանվում են սբ. Խորանի տակ[1]: Տաճարը Տիբերի ողողումների պատճառով սաստիկ վնասվել էր 1557 թ., սակայն հետագա դարերի ընթացքում այն աստիճանաբար վերականգնվեց, նորոգվեց և ստացավ իր նախկին հոյակերտ տեսքը:

1946 թ. մարտի 10-ին ծիրանափառ կարդինալ Աղաջանյանը իր պաշտոնական մուտքն կատարեց այս եկեղեցի՝ իբրև տիտղոսավոր: Եկեղեցու հրապարակում ժողովուրդը ողջույներով և ցնծությամբ են ընդունում նրան: Եկեղեցում Առաքելական Ավագ նոտար գերպ. Քարինչին ընթերցում է Պապի կոնդակը, որով Գրիգոր-Պետրոս Աղաջանյանին շնորհվել էր կարդինալական տիտղոսը, ապա տիտղոսակիրն իր ողջույնի խոսքով դիմում է ներկաներին[2]: Այս օրերի բոլոր մանրամասները տպագրվել ու լուսաբանվել են և՛ հայատառ պարբերականներում, ամսագրերում, և՛ իտալերեն, և՛ անգլերեն ինչպես նաև այլ լեզուներով:

Կաթոլիկ եկեղեցին 20-րդ դարի երկրորդ կեսից սկսում է ավելի ցայտուն կերպով եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների շարքերում ընդգրկել նաև տարբեր ռասաներից, ազգերից ներկայացուցիչներ, ինչն շարունակվում է առ այսօր: Եվ նաև այս քաղաքականության հետևանքով է նաև, որ կաթոլիկ եկեղեցում կարդինալ Աղաջանյանի համար այդ տարիներին ընձեռվում է լայն հնարավորություններ ծառայելու եկեղեցուն և հավատին:

---

[1] **M. Armellini,** Le chiese di Roma dal sec. IV al XIX, Roma, 1891, p. 620.

[2] Մանրամասն տե՛ս L'Osservatore Romano, մարտի 11-12, 1946:

ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԴԻՆԱԼԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Լիլիթ Պողոսյան

Բանալի բառեր՝ *կարդինալ, պատարագ, հռոմեական եկեղեցի, հայ կաթողիկե եկեղեցի, Հռոմ, սբ. Բարդուղիմեոսի եկեղեցի*

Հոդվածը վերաբերում է Հայ կաթողիկե նշանավոր հոգևորական Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանին հռոմեական եկեղեցու կողմից կարդինալական տիտղոսի շնորհմանը: Ներկայացվում է նաև այդ իրադարձությանը հաջորդած Վատիկանի Սիքստինյան մատուռում հայկական ծեսով պատարագը և այդ օրերի այլ հիշարժան դեպքեր:

ПОСВЯЩЕНИЕ В САН КАРДИНАЛА ГРИГОРИЯ-ПЕТРА XV АГАДЖАНЯНА

Лилит Погосян

Ключевые слова: *кардинал, литургия, римская церковь, армянская католическая церковь, Рим, церковь Св. Варфоломея*

Священнослужителя Армянской Католической Церкви Григория-Петра XV Агаджаняна. Представляется совершение божественной литургии в Сикстинской Капелле Ватикана по армянскому чину и другие знаменательные события этих дней.

ON GIVING CARDINALITY TO GREGORY PETER XV AGAJANIAN

Lilit Poghosyan

Key words: *Cardinal, Liturgy, Roman Church, Armenian Catholic Church, Rome, St. Bartholomew Church*

The article is about giving cardinality to Grigor-Peter Aghajanyan from the Roman Catholic Church. There was a liturgy with Armenian ritual in the Vatican Sistine chapel which was followed by other memorable events of those days.